ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2019/32

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննելով «Սլացք» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 05.03.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. <u>«Սլացք» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Սլացք» ՓԲԸ-ն 05.03.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Լավ Ընկեր» ՍՊԸ-ի կողմից 26.02.2019թ. բողոք է ներկայացվել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բեռնատարների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշումների մասով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք:

Ղեկավարվելով Օրենքի 50-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջներով՝ «Սլացք» ՓԲԸ-ն ներկայացնում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշումների դեմ համանման բողոք:

1. Բողոքի առարկան, փաստացի հիմքերը և ապացույցները.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բեռնատարների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/2» ծածկագրով գնման ընթացակարգ /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների հայտ են ներկայացրել նաև «Սլացք» ՓԲԸ-ն և «Լավ Ընկեր» ՍՊԸ-ն /այսուհետ նաև՝ Ընկերություն/:

Ընկերությունը հայտ է ներկայացրել 2-րդ, 3-րդ, 4-րդ և 7-րդ չափաբաժիններին:

Ընկերությունը 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղն զբաղեցնող մասնակից:

Սակայն 2-րդ և 7-րդ չափաբաժինների մասով հակադարձ աճուրդի շարունակվելու ընթացքում, որը տեղի է ունեցել 29.01.2019թ. (eauction.armeps.am) համակարգի խափանված լինելու պատճառով չի կարողացել համակարգ մուտքագրել վերջին, ավելի ցածր գնային առաջարկը, այն դեպքում, երբ տվյալ չափաբաժինների մասով աճուրդի ավարտին մնացել էր դեռ 3 րոպե:

Արդյունքում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի /այսուհետ նաև՝ Հանձնաժողով/ 29.01.2019թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 2-րդ և 7-րդ չափաբաժինների մասով առաձին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Լավ Ընկեր» ՍՊԸ-ն:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 01.03.2019թ. որոշման համաձայն՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/2» ծածկագրով աճուրդի 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ և 7-րդ չափաբաժինների մասով կասեցումը հանվել է:

2. Բողոքի իրավական հիմքերը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ նաև՝ Օրենք/ 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

1. Նույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

1. Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

2. Գնումների գործընթացին որևէ երկրի ռեզիդենտ հանդիսացող անձի (անձանց) մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգի 11-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում են նաև, որ մասնակցի հայտը ներառում է միայն գնային առաջարկը: Ընդ որում, մասնակիցը գնային առաջարկ կարող է ներկայացնել, եթե բավարարում է հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին: Գնային առաջարկը ներկայացնելը համարվում է սույն ենթակետով նախատեսված պահանջներին մասնակցի տվյալների համապատասխանությունը հավաստող հայտարարություն:

Նույն կարգի 12-րդ կետի համաձայն՝ հայտերը ներկայացնելու ժամկետը լրանալու պահի դրությամբ համակարգն ավտոմատ ծանուցման միջոցով հայտ ներկայացրած բոլոր մասնակիցներին ուղարկում է ներկայացված նվազագույն գնային առաջարկը, ինչպես նաև նոր (վերանայված) գներ ներկայացնելու վերաբերյալ առաջարկություն: Առաջարկությունը ներառում է նաև տեղեկություններ էլեկտրոնային աճուրդի բացման օրվա ու ժամի և

օգտագործվող էլեկտրոնային սարքավորումների հետ անհատական կապուղի հաստատելու համար անհրաժեշտ տվյալների մասին:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ աճուրդն ամփոփվելու պահի դրությամբ համակարգն ավտոմատ եղանակով պատվիրատուին և հայտեր ներկայացրած մասնակիցներին ներկայացնում է աճուրդի արդյունքները՝ ըստ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների անվանումների և զբաղեցրած տեղերի:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝ գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը

հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

3. Բողոքի վերլուծությունը և պահանջը.

Այսպիսով, գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությանն ենք հրավիրում այն հանգամանքին, որ «Սլացք>> ՓԲԸ-ն eauction.armeps.am համակարգի թերի և ոչ լիարժեք աշխատելու պատճառով զրկվել է իր մասնակցության իրավունքից լիարժեք օգտվելու հնարավորությունից, որի արդյունքում սահմանափակվել է գնման գործընթացին մասնակցելու մասնակիցների հավասար իրավունքը: Վերոհիշյալի արդյունքում կարող է կնքվել պայմանագիր ավելի բարձր գին առաջարկված մասնակցի հետ, ինչը կարող է էական մեծ վնաս պատճառել ՀՀ պետական բյուջեին, և դրանով անհիմն, ոչ օգտավետ և անարդյունավետ կվատնվեն պետական միջոցներ:

Քանի որ, գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 01.03.2019թ. որոշման համաձայն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/2» ծածկագրով աճուրդի 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ և 7-րդ չափաբաժինների մասով կասեցումը հանվել է, իսկ Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը, ապա միջնորդում ենք 2-րդ և 7-րդ չափաբաժինների մասով բողոք ներկայացնելու պարագայում ՀՀ պաշտպանության նախարարությանը տեղեկացնել նշված չափաբաժինների կասեցման մասին, ինչպես նաև խնդրում ենք արգելել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/2» ծածկագրով աճուրդի գնահատող հանձնաժողովին թիվ 2-րդ և 7-րդ չափաբաժինների մասով կատարել որոշակի գործողություններ՝ այն է կնքել պայմանագրեր:

Ելնելով վորոգրյալից՝ «Սլացք» ՓԲԸ-ն գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում է.

Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/2» ծածկագրով աճուրդի գնահատող հանձնաժողովին դադարեցնել թիվ 2-րդ և 7-րդ չափաբաժինների մասով «Լավ Ընկեր» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցնող և հաղթող մասնակից ճանաչելու մասին, նույն չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու մասին որոշումները և «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/2» ծածկագրով աճուրդի 2-րդ և 7-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր «Սլացք» ՓԲԸ-ի կողմից լիազորված ներկայացուցիչ Լինա Քոչարյանը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 14.03.2019թ. թիվ ՊՆ/02/61-2019 գրությամբ Բողոքներ քննող անձին հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 06.03.2019թ. №ԳԲԽ-ԷՍ/1/3604-19 գրության հայտնում եմ, որ էլեկտրոնային աճուրդի համակարգից (այսուհետ՝ Համակարգ) արտատպված տարբերակից հստակ երևում է, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃՁԲ-4/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով հակադարձ աճուրդը սկսվել է 28.01.2019թ., ժամը 11:00-ին, ընդ որում առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը վերջին գնային առարաջարկը ներկայացրել է 28.01.2019թ. ժամը 11:24:28-ին, իսկ 7-րդ չափաբաժնի մասով հակադարձ աճուրդը սկսվել է 29.01.2019թ. ժամը 9:00-ին, որում առաջին տեղ զբաղեցնող մասնակիցը վերջին գնառաջարկը ներկայացրել է 29.01.2019թ. ժամը 09:09:57:

Ինչ վերաբերում է բողոքաբեր կազմակերպության այն պնդմանը, որ գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջները, որն էլ հանգեցրել է Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի ոչ լիարժեք իրականացմանը՝ գտնում ենք, որ բողոքաբեր կազմակերպության պնդումը անհիմն է, քանի որ նույնիսկ, եթե Համակարգը խափանվել էր, գնահատող հանձնաժողովը չէր կարող տեղյակ լիներ այդ մասին, բացի այդ Հակադարձ աճուրդն ավարտվելուց հետո Համակարգի կողմից ավտոմատ կերպով կազմվել է ամփոփաթերթ՝ համաձայն որի «Սլացք» ՓԲԸ-ն 2-րդ և 7-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է երկրորդ տեղ զբաղեցնող մասնակից, որից հետո միայն հանձնաժողովը շարունակել է իրականացնել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված գործառույթները»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>ԳԲՔԱ-ԷՍ-2019/32 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «Սլացք» ՓԲԸ-ի կողմից 05.03.2019թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾԲ-4/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 29.01.2019թ. նիստի թիվ 2 և 08.02.2019թ. թիվ 3 արձանագրությունները, ՀՀ պաշտպանության նախարարության 14.03.2019թ. թիվ ՊՆ/02/61-2019 գրությամբ հայտնած դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բեռնատարների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Աճուրդ), որին մասնակցության հայտեր են ներկայացրել նաև «ԼԱՎ ԸՆԿԵՐ» ՍՊԸ-ն և «Սլացք» ՓԲԸ-ն:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով սահմանվել է՝

- հրապարակման ժամանակ 10.01.2019թ. ժամը 10:03:42,
- հայտերի ընդունման վերջնաժամկետ 25.01.2019թ. ժամը 11:00:00,
- հակադարձ աճուրդ 28.02.2019թ. ժամը 11:00:00:

Հանձնաժողովի 08.02.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Սլացք» ՓԲԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից Աճուրդի 3-րդ և 4-րդ չափաբաժիններով:

«Սլացք» ՓԲԸ-ն 05.03.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղն զբաղեցնող մասնակից: Սակայն 2-րդ և 7-րդ չափաբաժինների մասով հակադարձ աճուրդի ընթացքում, որը տեղի է ունեցել 29.01.2019թ. (eauction.armeps.am) համակարգի խափանված լինելու պատճառով Ընկերությունը չի կարողացել համակարգ մուտքագրել վերջին, ավելի նվազ գնային առաջարկը, թեև տվյալ չափաբաժինների մասով աճուրդի ավարտին մնացել էր դեռ 3 րոպե:

Ղեկավարվելով ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի 15-րդ կետով՝ Բողոքներ քննող անձը 14.03.2019թ. գրությամբ դիմել է էլեկտրոնային աճուրդի E-auction համակարգը սպասարկող «Ավռոմիկ» ՍՊԸ-ին՝ խնդրելով «Սլացք» ՓԲԸ -ի կողմից 05.03.2019թ. ներկայացված բողոքի քննության նպատակով իրականացվող նիստերին ապահովել էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող անձի մասնակցությունը:

Բողոքի քննության նպատակով կայացած նիստի ժամանակ «Ավռոմիկ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին տեղեկացրեց, որ «Ավռոմիկ» ՍՊԸ-ի կողմից ֆիքսված log ֆայլերում արձանագրվել է, որ տվյալ օգտատերը մինչև հակադարձ աճուրդի ավարտը (28.01.2019թ. ժամը 11:30) վերջին անգամ իր էջը թարմացրել է ժամը 11:29:58, այսինքն, այդ պահի դրությամբ «Սլացք» ՓԲԸ-ն հնարավորություն է ունեցել E-auction համակարգում կատարել գործողություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 42-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդը ամփոփվում (փակվում) է հետևյալ պայմաններից մեկի կամ դրանց համատեղ առկայության դեպքում.

1) հրավերում նշված կոնկրետ պահի.

2) սպառվել է աճուրդին մասնակցելու հրավերում նշված աճուրդի փուլերի քանակը.

3) նոր գներ այլևս չեն ներկայացվել: Այդ դեպքում աճուրդին մասնակցելու հրավերում պատվիրատուն նշում է վերջին առաջարկությունն ստանալուց մինչև էլեկտրոնային աճուրդի փակումն ընկած թույլատրելի ժամանակահատվածը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/2 ծածկագրով հակադարձ աճուրդի ավարտը սահմանված է եղել 28.01.2019թ. ժամը 11:30:00-ին:

- Հանձնաժողովի 08.02.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Սլացք» ՓԲԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից Աճուրդի 3-րդ և 4-րդ չափաբաժիններով:

- էլեկտրենային աճուրդի E-auction համակարգը սպասարկող «Ավռոմիկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված եզրակացության համաձայն՝ «Սլացք» ՓԲԸ-ն մինչև հակադարձ աճուրդի ավարտը՝ 28.01.2019թ. ժամը 11:30, վերջին անգամ իր էջը թարմացրել է ժամը 11:29:58, այսինքն, այդ պահի դրությամբ «Սլացք» ՓԲԸ-ն դեռևս հնարավորություն է ունեցել E-auction համակարգում կատարել որոշակի գործողություններ:

Այսպիսով, հաշվի առնելով, որ Ընկերության կողմից 05.03.2019թ. բողոքով չներկայացվեց որևէ վերաբերելի ապացույց առ այն, որ 28.01.2019թ. տեղի ունեցած հակադարձ աճուրդի ընթացքում էլեկտրոնային աճուրդի համակարգն աշխատել է խափանումներով, հետևաբար, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Սլացք» ՓԲԸ-ի կողմից 05.03.2019թ. բողոքով ներկայացված փաստարկները հիմնազուրկ են:

Ելնելով վերոգրյալից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

«Սլացք» ՓԲԸ-ի -ի կողմից 05.03.2019թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ